ԼԵՈՅԻ ՊԱՏՄԱՀԱՅԵՑՈՂՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

(հին և միջնադարյան ժամանակաշրջաններ)

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վ. Մ.

Հայ ականավոր պատմաբան, գրող և հրապարակախոս Լեոն՝ Առաքել Բաբախանյանը (1860-1932), գիտական ուրույն ճակատագիր ունեցավ: Ժամանակի հասարակական-քաղաքական ալեբախումները ձևավորեցին նրա՝ բարդ ու հակասական ելևէջներով հագեցած կենսադիրքորոշումը, գիտական աշխարհայացքն ու պատմահայեցողությունը, որոնց հիմնորոշ սկզբունքներից մեկը հասարակական-քաղաքական և հայրենասիրական կողմնորոշումն էր: Լեոյի պատմահայեցողությունը համահունչ էր ալեհույզ դարաշրջանի ոգուն, արտացոլում էր իրականությունը և ուներ ազգային-բարոյական ուղղվածություն:

Լեոյի պատմագիտական երկերի գլուխգործոցը քառահատոր «Հայոց պատմությունն» է, որտեղ աղբյուրագիտական հավաստի հենքի վրա պարբերացվել է մեր ժողովրդի պատմությունը՝ սկսած վաղնջական ժամանակներից մինչև XIX դ. ներառյալ (բացի XII- XV դարերը): Հեղինակը ջանացել է անաչառ լուսաբանությամբ վեր հանել վերելքների, վայրէջքների կորագծով անցած հայրենի երկրի պատմությունը: Տակավին 1911 թ. «Հորիզոն» թերթի հունիսի 15-ի համարում տպագրված հոդվածում Լեոն գրում է. «Պատմությունն այժմ զվարճալի ընթերցանություն չէ, այլ գիտություն»: Հարկավ, նրա բեղուն գրչի տակ հառնում են հայոց ալևոր անցյալի պատմության իրողություններն իրենց հարափոփոխ ելևէջներով: Նրա «Հայոց պատմությունը» հիրավի կոթողային երկասիրություն է, որն աչքի է ընկնում գիտական լայն ընդհանրացումներով, կուռ տրամաբանությամբ և փաստառատությամբ: Բազմավաստակ գիտնականը Հայաստանի պատմական անցյալի երևույթները հարակցում է հարևան երկրների պատմությանը, նշում նրանց միջև ձևավորված առնչությունները, ընդհանրությունները: Սակայն, ինքնուրույն և խոշոր մտածող լինելով հանդերձ, Լեոն երբեմն դիմում է ծայրահեղությունների, արդի գիտությանը հակասող անընդունելի դիտարկումների: Այսպես, նա կարծում է, որ Հայաստանի միավորումը տեղի է ունեցել միայն Արտաշես I-ի կողմից իրականացված «նվաճումների» շնորհիվ, որոնց ընթացքում նա իբր թե Ատրպա-տականից «խլել է» Վասպուրականը, վրացիներից՝ Տայքը, Գողարջ-քը և Գուգարքը, խալյուբներից ու մոսխերից՝ Կարինը, Դերջանը, Եկեղյաց գավառը, Ասորիքից՝ Տմորիքը և այլն[1]: Լեոյի համոզմամբ, Արտաշեսյան Հայաստանը մի երկիր էր, որի բազմալեզու ցեղերը «հայացվեցին, պետական մի ամբողջության մեջ ձուլվեցին հատկապես հայերեն լեզվի

[1] **Լեո,** *Երկերի ժողովածու (այսուհետև՝ ԵԺ), հ. I, Ե., 1966, էջ 507:*

միջոցով[2]: Եվ իբր հենց Արտաշեսի ձեռնարկումների շնորհիվ էր, որ ստեղծվեց «մի նոր քաղաքակիրթ պետություն»[3], իմա՝ Հայոց միասնական պետությունը, և Արտաշեսյան տոհմն էր «իսկական Հայաստան և հայ ազգության կազմակերպողը»[4]: Լեոյի այս մեկնակերպը բխում էր Երվանդունիների հայոց պետության գոյությունն անտեսելու փաստից: Իսկ այդ պետությունն, ինչպես հայտնի է, ընդգրկում էր այն շրջանները, որոնք ինչպես տեսանք, Լեոն դիտում է որպես Արտաշեսի կողմից «նվաճված» տարածքներ: Հասկանալի է՝ խոսք կարող է լինել միայն Հայաստանի հետ դրանց վերամիավորման մասին:

Լեոն նշում է նաև, որ Արտաշեսյանների օրոք Արարատյան դաշտն իբր «գաղութներ էր ուղարկում» Հայաստանի բնական սահմանները կազմող «օտար» ծայրագավառներ, ինչի միջոցով իբր թե «հայացվում» էին Գուգարքի մեծ մասը, Արցախը, Ուտիքը, Տայքը, Սյունիքը, Կորդուքը[5]: Եթե այդպես էր, հիշյալ տարածքների բնակչության խոսակցական լեզուն պետք է նման լիներ Արարատյան բարբառին, մինչդեռ պատկերը բոլորովին այլ էր: Նշված շրջան- ներից յուրաքանչյուրն ուներ իր ուրույն բարբառը՝ տարբեր թե՛ միմյանցից և թե՛ Արարատյանից:

Լեոն ժողովուրդների պատմության մեջ վճռորոշ տեղ է հատկացնում աշխարհագրական գործոնին: Նա գտնում է, որ Եգիպտոսի, Բաբելոնի քաղաքակրթությունները համաշխարհային դերակատարություն ունեցան շնորհիվ իրենց աշխարհագրական դիրքի: Հայաստանի աշխարհագրական դիրքով է պայմանավորում Տիգրան Մեծի նվաճումները, նաև Հայաստանի քաղաքական կողմնորոշումը[6]: «Հայկական լեռնաշխարհը,- գրում է Լեոն, այն բնական միջնաբերդն էր, որը պաշտպանում էր Եփրատ-Տիգրիսյան բարձր քաղաքակրթությունը հյուսիսի վայրենի ցեղերից»[7]:

Լեոյի պատմահայեցողության գծերից մեկը պատմության արդիականացումն է, որի ներկայացուցիչները (Է. Մայեր, Ա. Դոպշ, Մ. Ռոստովցև և ուրիշներ) պատմությունը դիտում էին որպես անցյալին միտված քաղաքականություն: Նրանք արդիականացնում էին անցյալի պատմական իրողությունները, ինչը պատմությանը հաղորդում էր սուբյեկտիվ բնույթ: Խոսելով Տիգրան Մեծի օրոք ստեղծված քաղաքական կացության մասին՝ Լեոն գրում է, որ այն պահից, երբ Արևմտյան Ասիան դարձել էր «արևելյան հարցի ար-յունահեղ ընդհարումների դաշտ... Հայաստանը դառնում էր կռվախնձոր երկու պայքարող աշխարհների մեջ»[8], և սկսած այդ ժամանակներից՝ «պարզ որոշվում

[2] Նույն տեղում, էջ 507:
[3] Նույն տեղում, էջ 296:
[4] Նույն տեղում, էջ 335:
[5] Նույն տեղում, էջ 334:
[6] Նույն տեղում, էջ 320:
[7] Նույն տեղում, էջ 142-143:
[8] Նույն տեղում, էջ 320:

է Հայոց հարցն իբրև մի մասնիկ Արևելյան հարցի»[9]: Մինչդեռ, ինչպես հայտնի է, «Արևելյան հարց», «Հայկական հարց» եզրերը միջազգային դիվանագիտության մեջ գործածվել են XIX դարում: Լեոն երբեմն գործածում է մոդեռնիստներին ներհատուկ արտահայտություններ: Այսպես, նա կարծում է, որ «հռոմեական իմպերիալիզմը ծնեց Հռոմի կապիտալիզմը»[10]: Նա Հայաստանը դիտում է որպես «հռոմեական իմպերիալիզմի առաջավոր պահակն Արևելքում»[11]: Իսկ Հայաստանը՝ որպես Հռոմի և պարթևական Իրանի միջև «տրորվող մի թույլ քաղաքական կազմակերպություն, անկախություն, իսկական մտքով չուներ...»[12]: Եվ ի զորու չեղավ «տեղական անջատ շահերի իրականությունից բարձրանալ մինչև ընդհանուր համայնական, ընդհանուր պետական շահերի մշտատև հասկացությունը: Այսպիսի մի երկիր չէ կարող ուժեղ, կենտրոնացված պետություն... ստեղծել»[13]:

Հակասական են ու միակողմանի Տիգրան Մեծի մասին Լեոյի մտորումները: Տիգրան Մեծն, ըստ պատմաբանի, ազգային կատարյալ անկախություն է ստեղծում[14]: Մյուս կողմից, տուրք տալով հին հռոմայեցի պատմագիրների (որոնց կողմնակալությունը չի ժըխտում) միտումնավոր հաղորդումներին, Լեոն կարծում է, որ մ.թ.ա. 69 թ. Հայաստանի վրա հռոմեական զորքերի հարձակման պահին Տիգրան Մեծն «ասիական բռնապետին հատուկ վերաբերմունք ցույց տվեց... մեծամտությունը կուրացրեց նրան»: Եվ իբր թե Տիգրանակերտի ճակատամարտի ժամանակ Տիգրանը «խուճապահար փախավ», նա «մի մարդ էր, որ պարծենկոտության մեջ չափ չէր ճանաչում, բայց անհաջողության մեջ շուտ գլուխ էր կորցնում և հուսահատվում»[15]: Միաժամանակ, Լեոն իրավացիորեն գտնում է, որ Տիգրան Մեծը կարողացավ կարճ ժամանակում «ոչնչացնել հռոմեական հաղթությունների բոլոր հետևանքները»[16]: Պատմաբանի կարծիքով, «աշխարհակալ սուլթանության գոռոզ ներկայացուցիչ Տիգրանը», մ.թ.ա. 66 թ. մեկնելով Պոմպեոս զորապետի մոտ, իր ստեղծած մեծ պետությունը կախման մեջ դրեց Հռոմից, որով իսկ որոշվեց Հայաստանի ապագա ճակատագիրը[17]:

Մի կողմից, Լեոն կարծում է, որ Տիգրան Մեծի ստեղծած պետությունը «մի ասիական բռնապետություն էր», մյուս կողմից, չի վարանում նշել, որ Տիգրանը «հելլենականության սիրահար էր»[18], առանց խորամուխ լինելու այդ ականավոր ու կորովաշատ թագավորի օրոք Հայաստանում հելլենիստական քաղաքակրթության տա-

---

[9] *Նույն տեղում, էջ 299-300:*

[10] **Լեո,** *Խոջայական կապիտալը և նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Ե., 1934, էջ 15:*

[11] *Նույն տեղում, էջ 17:*

[12] *Նույն տեղում, էջ 13:*

[13] *Եժ, հ. I, էջ 146:*

[14] *Նույն տեղում, էջ 320:*

[15] *Նույն տեղում, էջ 309-310:*

[16] *Նույն տեղում, էջ 312:*

[17] *Նույն տեղում, էջ 320:*

[18] *Նույն տեղում, էջ 303:*

բածման հանգամանքների մեջ, ինչը հետագայում լայնորեն լուսաբանել է Հ. Մանանդյանը[19]:

Լեոն իրատեսորեն շեշտում է հայ ավատական ազնվականության՝ նախարարության՝ իբրև ազգային շահերի պաշտպանության միակ գործոնի հիրավի վճռորոշ դերը Հայոց պետական համակարգում: Սակայն միաժամանակ տուրք տալով իր մոդեռնիստական մեկնակերպին՝ գտնում է, որ մ.թ. I դարում իբրև «ազգային կուսակցություն» հանդես եկող նախարարությունը գործում էր նաև որպես «պարսկական կուսակցություն»՝ Հռոմի դեմ դաշնակից դարձնելով պարթևներին[20]: Բայց ճիշտ չէ այդ ժամանակ «կուսակցության» գոյությունն ընդունելը: Լեոն կարծում է, որ «հայ ազնվականության ավատական դիրքը կազմավորելու և օրենսդրելու համար» հայ նախարարությունները Տրդատ I-ի օրոք են «երևան գալիս այն կերպարանքով, որ նրանք պահպանեցին... երկար դարեր՝ իբրև հայ ժողովրդի քաղաքական-կուլտուրական ինքնուրույնության հիմք»[21]: Նա անտեսում է Երվանդունիների պետական համակարգում նախարարությունների խաղացած դերը:

Լեոն թյուր կարծիք ունի Հայոց պետականության մասին՝ գրտնելով, որ տակավին Տիգրան Մեծի ժամանակից Հայաստանում «ուժեղ կենտրոնական իշխանություն չկար և չէր կարող լինել»[22]: Եվ որ Տրդատ Մեծը, նրան հաջորդած Խոսրով Կոտակը ենթարկվում էին հայոց կաթողիկոսին, իսկ Արշակ II-ի օրոք Հայաստանը «փոքրիկ և թույլ պետություն էր», և Արշակ II-ն ու նրա նախորդող թագավորները կորովագուրկ էին, «թույլ ու միամիտ», մինչդեռ Մերուժան Արծրունին «եռանդոտ, ուժեղ կամքի տեր մարդ էր»[23]: Սակայն հայտնի է, թե ինչպես էր «փոքրիկ և թույլ» համարվող Հայաստանը երկար ժամանակ հզոր հարևանների դեմ հերոսական մաքառումներով պահպանում իր անկախությունը[24]:

Պատմաբանը բարձր է գնահատում Պապ Արշակունուն՝ իբրև «եռանդուն ու մեծագործ թագավորի», որի բարեփոխումները «քաղաքակրթական տեսակետից առաջադիմական քայլեր էին»: Պապին, ըստ Լեոյի, իբր թե սպանել են հունասեր հայերի նյութած դավով, երբ վերջիններս գործիք են դարձրել Հայաստանում տեղակայված հռոմեական զորախմբի հրամանատարին[25]: Սակայն, ինչպես հայտնի է, Հռոմն առաջնորդվում էր սեփական շահերով, որոնք պահանջում էին ոչնչացնել անկախ քաղաքականության հետամուտ հայոց երիտասարդ ու կորովի թագավորին:

---

[19] **Մանանդյան Հ.,** *Երկեր, հ. Ա, Ե., 1977, էջ 458-466:*

[20] *Եժ, հ. I, էջ 336-337:*

[21] *Նույն տեղում, էջ 353: Այլ առիթով Լեոն գրում է, որ հայ նախարարությունների կազմավորումը տեղի է ունեցել հնդեվրոպական արմենների և «նախահայ բնիկների» ազնվականության միաձուլումից (նույն տեղում, էջ 360):*

[22] *Նույն տեղում, էջ 435:*

[23] *Նույն տեղում, էջ 447, 462:*

[24] **Փաւստոսի Բուզանդացւոյ** *պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, էջ 89, 116-118, 122 և այլն:*

[25] *Եժ, հ. I, էջ 483:*

Հակասական են նաև V դ. հայ ազատագրական պատերազմների վերաբերյալ Լեոյի եզրահանգումները, որոնք ևս կրում են մոդեռնականության դրոշմ: Այսպես, նա կարծում էր, որ Հայաստանի մարզպան Վասակ Սյունեցին, համոզվելով, որ առանց դաշնակիցների հզորագոր Պարսկաստանի դեմ ապստամբելը հղի է ծանր հետևանքներով, պարսիկների հետ սերտ համագործակցությամբ ծավալում է «հակահեղափոխություն»՝ Վարդան Մամիկոնյանի ու նրա զորակիցների «հեղափոխության» դեմ[26]: Լեոն «հեղափոխություն» է համարում նաև 482-484 թ. ծավալված հայ ազատագրական շարժումը՝ Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ, որը, նրա կարծիքով, դրական ելքի հանգեց ոչ թե հայերի հերոսական մաքառումների, այլ հեփթաղներից պարսից Պերոզ արքայի կրած պարտության շնորհիվ: Մի կողմից, նա գտնում է, որ «հայոց քաջարի զորավար» Վահանը ճկուն էր նաև դիվանագիտության դաշտում, մյուս կողմից, հանգում է այն տեսակետին, որ Վահանի գլխավորած շարժումը ոչ մի փոփոխություն չմտցրեց Հայաստանի քաղաքական ճակատագրում, վերջինս պահպանեց նախկին «հպատակական դրությունը», և հայերը տարան սոսկ բարոյական հաղթանակ[27]: Սակայն անուրանալի է Վահանանց ապստամբության նշանակությունը Հայաստանի ներքին ինքնավարության, քրիստոնեական կրոնի պահպանման գործում: 484 թ. Նվարսակ գյուղում կնքված պայմանագրով, փաստորեն, Հայաստանում սկիզբ դրվեց նոր դարագլխի, որն այնուհետև գրեթե առանց ընդհատումների շարունակվեց մինչև արաբական տիրապետությունը[28]:

Խոսելով 571-572, 774-775 և 850-851 թ. հայերի ծավալած ապըստամբությունների մասին՝ Լեոն շեշտում է երկրում ծայր առած միջիշխանական գժտությունները, հայերի՝ միաբանվելու «անկարողությունը»՝ չմոռանալով, սակայն, նշել հայերի ցուցաբերած քաջությունն ու օտարի լուծը թոթափելու վճռականությունը[29]:

Նա վճռորոշ դեր է հատկացնում հոգևոր-կրոնական կռվաններին՝ դրանք դիտելով որպես «քաղաքակրթության ամենահզոր գործոններից մեկը»[30]: Բայց հիմնավորված չէ պատմաբանի պնդումը, որ իբր Արտաշեսյան հայոց արքաների օրոք Հայաստանը «գերազանցորեն զրադաշտական երկիր էր», և որ Տրդատ I-ի գահակալման տարիներին՝ մ.թ. I դ. երկրորդ կեսին «վերջնականապես ձևավորվում է հայերի կրոնական պաշտամունքը՝ «զրադաշտականության գրկում»[31]: Լեոն իրանական ծագում է վերագրում հայոց հեթանոսական աստվածներին՝ աստվածահայր Արամազդին, Անահիտ դիցուհուն, Միհրին, Տիրին, իսկ Աստղիկին, Նանային համարում է ասորիների պանթեոնից փոխառած: Միաժամանակ, նա չի ժխտում, որ

---

[26] Եժ, հ. II, Ե., 1967, էջ 17-19:
[27] Նույն տեղում, էջ 128:
[28] **Մանանդյան Հ.,** Երկեր, հ. Դ, Ե., 1981, էջ 416:
[29] Եժ, հ. II, էջ 205, 392, 445:
[30] Եժ, հ. I, էջ 59:
[31] Նույն տեղում, էջ 353:

հին Հայաստանում կար նաև սեփական ազգային պաշտամունք, որին ներհյուսվեց օտարամույծը, և «հայ ժողովուրդը ստեղծագործող ինքնուրույնություն ցույց է տվել ոչ միայն պետական կյանքում, այլև կրոնական պաշտամունքի, գրականության մեջ»[32]: Հայոց ազգային հին կրոնը՝ հեթանոսությունը «զրադաշտականություն չէր իսկական իմաստով և հայ ազգայնական շատ ինքնուրույնություններ ուներ իր մեջ»[33]:

Հիմնավորված չէ Լեոյի կարծիքը, որի համաձայն, III դ. սկզբին, երբ Միջագետքի Օսրոյենե պետության (Եդեսիայի) Աբգար IX թագավորը (179-214) ընդունում է քրիստոնեություն, դրանով իսկ այդ կրոնն «առաջին անգամ դառնում է պետական կրոն»[34]: Սակայն Աբգար IX-ը քրիստոնեությունն ընդունել է իբրև դինաստիական պաշտամունք, որը վերացվել է նրան հաջորդած որդու օրոք: Այդ մասին վկայված է III դ. ստեղծված ասորական երկում՝ «Ադդայի վարդապետության» մեջ[35]: Թեև այս երկում քրիստոնեությունն ընդունված է համարվում Եդեսիայի Աբգար V թագավորի կողմից (I դար), բայց վաղուց ապացուցված է, որ իրականում այդ կրոնն ընդունողը եղել է Աբգար IX-ը[36]: Հայաստանն էր, որ դարձավ աշխարհում առաջինը քրիստոնեությունը պետական կրոն հռչակած երկիրը[37]:

Լեոյի պատմահայեցողությամբ, Հայաստանում քրիստոնեությունը պաշտոնապես ընդունելուց հետո Եկեղեցին՝ «հոգևոր միապետությունը», «անպատասխանատու» լինելով եկեղեցական գործերում, ջանում էր նաև իր ձեռքը վերցնել «աշխարհական անպատասխանատու իշխանությունը», Հայաստանում «ուժեղ կենտրոնական իշխանություն չկար և չէր կարող լինել», իսկ քրիստոնեությունը «միայն իր համար էր աշխատում ուժեղ եկեղեցական կենտրոնացում ստեղծել…, Հայաստանի մեջ կազմվել էին երկու պետություն՝ աշխարհական և հոգևոր», որոնք ունեին տարբեր շահեր և միմյանց հանդեպ որդեգրել էին հակոտնյա դիրքավորում[38]:

Սակայն Հայ առաքելական եկեղեցին միշտ նվիրագործել է Հայոց պետականությունը, սատար կանգնել հայոց թագավորներին: Անուրանալի են երկիրը հոգևորապես միաբանելու, ազատանուն թագավորի շուրջը համախմբելու, նրա իշխանությունը սրբազնագործելու ուղղությամբ Եկեղեցու գործադրած ջանքերը: Հայոց եկեղեցին երբեք չի ձգտել իրեն վեր դասել պետությունից, ինչն ընդունված էր լատին եկեղեցում:

---

[32] *Նույն տեղում, էջ 381, 386:*

[33] *Նույն տեղում, էջ 419:*

[34] *Նույն տեղում, էջ 416:*

[35] **Ղեբուբնա Եդեսացի,** *Թուղթ Աբգարու թագաւորի Հայոց, և քարոզութիւնք ս. Թադէի առաքելոյ, Երուսաղեմ, 1868, էջ 57:*

[36] **Duval R.** *Histoire politique, religieuse et litéraire d'Edesse jusqua la premiere croisade, Paris, 1892, p. 90-91.*

[37] **Գելցեր Հ.,** *Փաւստոս Բիւզանդ կամ Հայկական եկեղեցւոյ սկզբնաւորութիւն, Վենետիկ, 1896, էջ 65,* **Weber S.** *Die Katholische Kirche in Armenien, Freiburg, 1903, S. 471,* **Duchesne L.** *Early History of the Christian church, vol. III, London, 1960, p. 367, The Cambridge History of the Bible, vol. I, Cambridge, 1970, p. 366,* **Մանանդյան Հ.,** *Երկեր, Բ, Ե., 1978, էջ 132 և այլն:*

[38] *Եժ, հ. I, էջ 435-437:*

Հայրենասեր պատմաբանը մեծ գովեստով է խոսում Սահակ-Մաշտոցյան լուսանորոգ բարեփոխումների մասին՝ դրանք համարելով հայության գոյատևման հզոր ու անանցանելի գործոն: Սահակ կաթողիկոսի օրոք, գրում է Լեոն, անհրաժեշտ էր «լիովին հայացած քրիստոնեություն», որը չէր կարող ձևավորվել առանց հայալեզու գրականության: Սակայն անընդունելի է պատմաբանի պնդումը, որ իբր «մինչև 11-րդ դարը մեր պատմագրությունը, մեծագույն մասամբ, սահմանափակված է տոհմային պահանջների մեջ», ինչը նվազեցնում է այդ աղբյուրների պատմական արժեքը, դարձնում միակողմանի[39]:

Լեոն ընդունում է վրաց և աղվանից եկեղեցիների՝ վարչականորեն կախված լինելը հայոց եկեղեցուց և գտնում է, որ այն հիմնված էր Գրիգոր Լուսավորչի (որին իրավամբ համարում է «հայ ազնվական մի նշանավոր տոհմի զավակ»[40]) հեղինակության վրա: Իսկ Գրիգորին Կովկասի քրիստոնյա ազգերը ճանաչում էին որպես ընդհանուրի առաջին առաքյալ: Հայերը, վրացիները և աղվանները «մի ընդհանուր եկեղեցական կյանք ունեին, և այս կյանքի մեջ Հայաստանը կատարում էր քրիստոնեական քաղաքակրթության միջնորդի դեր, աշակերտելով Արևմուտքին և իր յուրացրածը հաղորդելով հարևան և եղբայր ժողովուրդներին»[41]:

Բազմահմուտ պատմաբանը համոզված է, որ հայոց միասնական պետականության վերացումից հետո «հայ ժողովուրդը կաթողիկոսական գահի մեջ էր որոնում այն, ինչ մի ժամանակ ուներ իր թագավորների և իշխանների անձի մեջ: Եկեղեցին հայտնի չափերով բռնեց քաղաքական հիմնարկությունների տեղը… Կաթողիկոսությունն այդ ժողովրդի միակ ազգային իշխանությունն էր, որ Եկեղեցու միջոցով և մանավանդ Եկեղեցու համար՝ կատարում էր ազգի զանազան մասերը միացնողի, հավաքողի խոշոր դերը»[42]: Սակայն դժվար է համաձայնել հայոց դավանական ինքնորոշման մասին Լեոյի հայտնած կարծիքին: Ինչպես հայտնի է, Հայոց դավանական անկախության հիմքերը դրվեցին Դվինի 554 թ. ժողովում: Մինչդեռ պատմաբանի կարծիքով, Դվինի այդ ժողովի տարին՝ «554 թվականը ճիշտ որ այն կետն էր, որից շուռ էր գալիս Հայոց պատմության անիվը: Հայ ժողովուրդը վերջնականապես և անդառնալի կերպով հաստատում էր իր ազգային ինքնորոշումը մի կատարյալ կղզիացման մեջ, որ այնուհետև նրա ճակատագիրը դարձավ քրիստոնյա աշխարհի մեջ»[43]:

Անընդունելի է նաև Հայաստանում ազանդավորական շարժումների վերաբերյալ Լեոյի տեսակետը: Նրա կարծիքով, պավլիկյան աղանդը «ձգտում էր միացնել քրիստոնեությունն ու զրադաշտականությունը», վերջինից վերցնելով աշխարհը բարի

[39] Եժ, հ. II, էջ 31:
[40] Եժ, հ. I, էջ 419:
[41] Եժ, հ. II, էջ 142:
[42] Եժ, հ. III, Ե., 1969, էջ 130:
[43] Եժ, հ. II, էջ 160:

ու չար աստվածների կողմից կառավարելու հիմնորոշ սկզբունքը[44]: Ըստ Լեոյի, Միջագետքում ծագած քրիստոնեական աղանդը՝ մծղնեությունը, ուներ կոմունիստական բնույթ[45]: Նա «կոմունիստական» է համարում նաև Պարսկաստանում տարածված մազդակյան և մանիքեական աղանդները[46]: Եվ իբր մանիքեությունը VII դարում «վերանորոգվում է Հայաստանում նոր և ուժեղ կերպարանքով»՝ ի դեմս պավլիկյան աղանդի, ուստի վերջինս «կապվում է պարսկական կոմունիզմի հետ»[47]: Լեոն «կոմունիստ մտածող» է համարում IX դ. սկզբներին Արաբական խալիֆայության դեմ բռնկված ապստամբության առաջնորդ Բաբեկին[48]: Նա «կոմունիստական» է որակում նաև Հայաստանում IX դ. ծավալված Թոնդրակյան աղանդը, որն իբր վերանորոգեց և ավելի ժողովրդականացրեց «մինչ այդ գոյություն ունեցած կոմունիստական ուսմունքները»[49]: Իբր այդ աղանդի հիմնադիր Սմբատ Զարեհավանցին, որի ուսմունքի «աղբյուրը պարսկական էր»[50], իր կողմնակիցների հետ պատրաստում էր «մի ամբողջ հեղափոխություն»[51]: Թոնդրակյան աղանդը «կրոնական կոմունիզմ է... կոմունիստական ուսմունքի վերջին արտահայտությունը՝ իրանյան հողից անցած հայկականը...»[52]: «Բայց,- շարունակում է պատմաբանը,- հայկական միջնադարին հատուկ է և քրիստոնեական աղբյուրներից եկած ու քրիստոնեական հիմնարկությունների մեջ ապրած կոմունիզմը: Այսպես և վանական կոմունիզմը», որը Լեոն խոշոր երևույթ է համարում նաև Արևմտյան Եվրոպայի վանական կյանքում[53]:

Լեոն հակված է այն կարծիքին, որ միջնադարյան Հայաստանում եղել են ճորտատիրական հարաբերություններ: Որպես ապացույց՝ նա վկայաբերում է X դ. սկզբին Սյունիքում Տաթևի վանքի դեմ ուղղված գյուղացիական խռովությունները, որոնք իբր հարուցվել են «ճորտատերերի դեմ»[54]: Բայց 906 թ. Տաթևի վանքի Կաթողիկե եկեղեցու շինարարության ավարտի առթիվ վանքին շնորհված չորս գյուղերի տերերը դիմադրում են այդ վճռի դեմ, ինչը վկայում է, որ նրանք ոչ թե ճորտեր, այլ ազատ գյուղացիներ՝ «հին հայրենի տէրք» էին[55]: Անշուշտ, ճորտատիրության բացակայությունը խոսում է Հայաստանում վաղնջական ժամանակներից ազատ գյուղացիության առկայության, իհարկե, նաև իշխանների թուլության մասին:

---

[44] *Նույն տեղում, էջ 333:*

[45] **Լեո,** *Կոմունիզմը Հայոց պատմության մեջ (Նորք, գիրք 1-ին, 1922, էջ 133):*

[46] *Նույն տեղում, էջ 136:*

[47] *Նույն տեղում:*

[48] *Նույն տեղում, էջ 140:*

[49] *Նույն տեղում, էջ 142:*

[50] *Նույն տեղում:*

[51] *Նույն տեղում, էջ 149:*

[52] *Նույն տեղում, էջ 150:*

[53] *Նույն տեղում:*

[54] **Լեո,** *Անցյալի հարցերից (Մուրճ, 1905, N 10,* **նույնի՝** *Խոջայական կապիտալը..., էջ 141-146:*

[55] **Ստեփաննոս Օրբէլեան,** *Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 230:*

Լեոն գրում է, որ երբ Եվրոպան առաջադիմում էր, Հայաստանը դատապարտված էր կրելու իր վրա բռնացած «թուրքական և մոնղոլական տիրապետությունները…Դա մի բռնակալություն էր, որի տակ մարդը դատապարտված էր ոչնչացման…Դա թուրքերն էին,… սրի ու հրի արյունածարավ պաշտամունքով»[56]: Եվ թուրք-պարսկական պետությունների տիրապետության տակ գալարվող հայությունն ուրիշ ելք չուներ, քան «հպատակվել, հարմարվել միջավայրին՝ իր ցեղային անհատականությունը պահպանելու համար»[57]: Բայց, ինչպես նշում է պատմաբանը, անգամ ծանր ու անհուսալի պայմաններում հայ ժողովրդի կենտանակ հոգին ուներ իր ներքին անկախ մղումները, որոնց շնորհիվ «քաղաքական ոչ մի դժբախտություն չէր կարողանում վերջնականապես սպանել հայ ժողովրդի ձգտումը դեպի լույս և առաջադիմություն»[58]:

Միաժամանակ, Լեոն համոզված է, որ թուրք-պարսկական տիրապետության ժամանակներում հայ առևտրական դասը հետզհետե մեծ ազդցություն է ձեռք բերում: Պատմաբանը հայկական իրականության վրա է տարածում առևտրական կապիտալի վճռորոշ դերի վերաբերյալ Մ. Պոկրովսկու տեսությունը: Սկսած XVI դարից՝ Հայաստանում վճռական դեր է խաղացել հայ առևտրական («խոջայական») կապիտալը՝ Պարսկաստանում ձևավորված «հայ առևտրական բուրժուազիան, որ կազմում էր հասարակական առաջնակարգ շարժիչ ուժ… Այդ ուժն էլ դառնում է այն առանցքը, որի շուրջը պտտում է հայոց ամբողջ պատմությունը XVI, XVII, XVIII և XIX դարերի ընթացքում»[59]: Ավելին, խոշոր խոջայությունը «առևտրական գործիչ էր միջազգային չափանիշով», նրան ևս համակել էր «շուկաների նվաճումը» և, ի զուգակշիռ եվրոպացի առևտրականների, հայ խոջաները ևս կազմում էին առևտրական փոքր ընկերություններ, մրցակցում նրանց հետ՝ «ոտքի տակ տալով գրեթե ամբողջ աշխարհը»[60]: Մահմեդական աշխարհում, գրում է պատմաբանը, հայ վաճառականը՝ խոջան իսկական իշխանից ավելի լավ դիրք ուներ, քանի որ հարստություն էր բերում երկրին, գանձարանին: Իհարկե, Լեոն չի անտեսում այն իրողությունը, որ անհրաժեշտ դեպքերում շահը, սուլթանը, խանը, փաշան կարող էին խլել խոջայի ամբողջ հարստությունը, նույնիսկ կյանքը[61]:

Խոջայական կապիտալը դարձել էր հայ ազատագրական շարժումների «ծնող, դաստիարակող, ղեկավար» ուժը[62]: Իսրայել Օրու «ազգասիրությունը… արդյունք էր հայ խոջայական կապիտալի, մի համաշխարհային շրջմոլիկի, որ ամիրայական

---

[56] Եժ, հ. III, գիրք I, էջ 10:
[57] Նույն տեղում, էջ 15:
[58] Նույն տեղում, էջ 205:
[59] **Լեո,** *Խոջայական կապիտալ, էջ 56:*
[60] Նույն տեղում, էջ 82:
[61] **Լեո,** *Երկերի ժողովածու, հ. III, գիրք I, էջ 150:*
[62] **Լեո,** *Խոջայական կապիտալ, էջ 5:*

կապիտալի պես փակված չէր տեղայնության մեջ...»[63]: XVII դարի վերջից մտնելով ազատագրական շարժումների շրջափուլը՝ հայ ժողովուրդը լարում է «իր բոլոր ջանքերը՝ քաղաքական ստրկությունից ազատվելու և արևի տակ իր համար մի անկյուն ձեռք բերելու համար»[64]: «Հայրենիքի դատը մարդկության առաջ դնելու համար» Եվրոպա մեկնած Իսրայել Օրին «քաղաքական խորաթափանցություն ու կանխատեսություն» ցուցաբերեց՝ մատնացույց անելով «մի իրական ուժ հեռավոր Հյուսիսում՝ Ռուսաստանը»[65]: Լեոն նաև նշում է Օրու ծրագրի ուտոպիական, չափազանցված եզրերը՝ չմոռանալով շեշտել այն անողոք ճշմարտությունը, որ «երբ մի ազգի ճակատագիրը դառնում է միջազգային քաղաքական ուժերի հոգածության առարկա», ամեն ինչ որոշում են այդ ուժերի փոխհարաբերությունները՝ լիովին անտեսելով «խնամակալության ենթակա ազգի զգացմունքները»: Եվ Օրու ազատագրական ծրագիրն «իրական արժեք կունենար, եթե նա համապատասխաներ մրցող կողմերից մեկնումեկի շահերին և անմիջական լուծում պահանջեր հենց հանուն այդ շահերի: Իսրայել Օրին այդպիսի դրության չհանդիպեց», նրա ծրագիրը «իրական արժեքից զուրկ հանդիսացավ»[66]: Այդուհանդերձ, պատմաբանը իրավացիորեն ավելի իրատեսական է համարում Օրու ռուսական ծրագիրը՝ եվրոպականի (պֆալցյանի) համեմատ[67]:

Լեոն բարձր է գնահատում Արցախի սղնախների, Սյունիքում Դավիթ Բեկի հերոսական մաքառումները՝ նշելով, որ Դավիթ Բեկի շնորհիվ Սյունիքում իրականացավ հայ ազատագրական շարժման «գերագույն ու վեհագույն ձգտումը», և առաջին անգամ իրագործվեց Օրու մտահղացած ծրագիրը՝ «ցույց տալով, որ Իսրայել Օրին ոտքի տակ հող չունեցող մի երևակայող չէր, այլ մի մտածող և նախատեսող, որ ծնվել էր ժամանակի պայմաններից ու պահանջներից»[68]: Մինչդեռ, կարծում է պատմաբանը, Հովսեփ Էմինի և Շահամիր Շահամիրյանի՝ ազգն ազատագրելուն միտված ծրագրերը ժամանակավրեպ ու շատ էին «ուտոպիական... տհաս և անհամոզեցուցիչ», քանի որ այն ժամանակվա պայմաններում հնարավոր չէր դրանք կենսագործել: Իրատեսական վերաբերմունք դրսևորեց Սիմեոն Երևանցի կաթողիկոսը, որը «ավելի լավ էր հասկանում իրականությունը, քան հնդկաստանցի հայ ուտոպիստները», գտնելով, որ ժողովուրդը պետք է լուռ ու մունջ կրի ճակատագրի բեռը և անզգույշ քայլերով չպետք է կասկածներ ու թշնամանք հարուցի մահմեդականների մեջ[69]:

---

[63] *Նույն տեղում, էջ 256:*

[64] **Լեո,** *Երկերի ժողովածու, հ. III, գիրք II, Ե., 1973, էջ 7:*

[65] *Նույն տեղում, էջ 43:*

[66] *Նույն տեղում, էջ 69:*

[67] *Նույն տեղում, էջ 74-75:*

[68] *Նույն տեղում, էջ 203:*

[69] *Նույն տեղում, էջ 323-326:*

Լեոն, իր պատմահայեցողության հակասական կողմերով հանդերձ, մնում է որպես հայ լիբերալ պատմագրության կարկառուն ներկայացուցիչը, որն իր երկերում հանդես է գալիս նաև որպես բարոյախոս՝ ջանալով սերունդներին հասու դարձնել անցյալի դասերը: Անշուշտ, մեծավաստակ պատմաբանի աշխատությունները պահպանել են իրենց գրական-հրապարակախոսական և պատմագիտական նշանակությունը նաև մերօրյա գիտական ոլորտներում:

ОБ ИСТОРИЧЕСКОЙ КОНЦЕПЦИИ ЛЕО

(ранний и средневековый периоды)

ВАРДАНЯН В. М.

Резюме

Исторические воззрения выдающегося армянского историка Лео – Аракела Бабаханяна (1860-1932) имели национальные и социально-нравственные корни. Синтезом научно-литературной деятельности Лео является его главный труд “История Армении”, рассматривающий историю армянского народа начиная с древнейшего периода вплоть до второй половины XIX века (за исключением XII-XV вв). Ученый придавал важное значение связям Армении с соседними странами. Он подчеркивал решающую роль армянского дворянства в политическом развитии страны. Однако исторические воззрения Лео порою носят односторонний характер и не лишены крайностей. По его мнению Армения как государство обрела могущественность при Арташесидах (II в. до н. э). Но, как известно, еще в VI в. до н. э. было создано объединенное Армянское государство при Ервандунидах. Лео переоценивал роль Армянской апостольской церкви, но недооценил деятельность армянских царей. Историк нередко модернизировал историческое прошлое, перенося современные реалии в прошлое и тем самым придавая истории субъективный характер.

Апеллируя к концепции М. Покровского о “торговом капитале”, он пытался увязать ее с историей Армении, придавая решающее значение купеческому капиталу в жизни армян. В целом труды Лео являют собой огромную историко-литературную ценность.